1-2 (23-24) 2011

*ՀՏԴ 809.198.1* *Հայոց լեզու*

# ՁԱՅՆԱՎՈՐ ԵՎ ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՈՒՅԹՆԵՐԸ ԳՈՐԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ա.Յու.Սարգսյան

Գորիսի բարբառը հայերենի կենսունակ բարբառներից է, որով հաղորդակցվում են ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի շրջանում, ինչպես նաև հարևան՝ Սիսիանի և Ղափանի շրջանների սահմանամերձ գյուղերում[1]:

Լինելով խիստ տեղայնացված բարբառ՝ այն գտնվում է որոշակի աշխարհագրական միջավայրում, որը համընկնում է պատմական Սյունյաց նահանգի Հաբանդ գավառին՝ ներառելով նաև մերձակա Ծղուկ(ք) և Բաղք գավառներին պատկանող մի շարք բնակավայրեր[2]:

Ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Գորիսը Ղարաբաղի բարբառի կենտրոնից բարբառային սահմաններ գծող տարբերություններ չի ներկայացնում (ընդամենը 11 տարբերակիչ հատկանիշ) և դասվում է վերջինիս խոսվածքների շարքին[3], իսկ որոշ լեզվաբանների կարծիքով՝ այն ինքնուրույն բարբառ է[4]:

Բարբառի մասին առաջին հիշատակությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին՝ «***Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զնգերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՁորրորդ Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ եւ առգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»***[5], ինչն էլ վկայում է, որ բարբառը խոր հնություն ունի և դարերի ընթացքում ներքին զարգացմամբ ու այլ բարբառների և լեզուների հետ շփման հետևանքով ձեռք է բերել հնչյունական, քերականական տարբեր օրինաչափություններ և հարուստ բառապաշար:

Գորիսի բարբառում գործածական է 41 հնչյուն, որից 9-ը՝ ձայնավոր, 32-ը՝ բաղաձայն[6]:

Ձայնավոր հնչյուններն են ***ա, ³, ու, áւ, օ, û, է, ի, ը***.

***Ա, ու, օ, է, ի, ը*** ձայնավորները, ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում ևս անկախ հնչույթներ են, քանի որ հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բաց և փակ, շեշտակիր և շեշտազուրկ վանկերում, գրաբարից ավանդված, բարբառային ու փոխառյալ բառերում և միմյանց հետ կարող են կազմել հակադրական զույգեր:

***²***, ***áւ***, ***û***-Ý գրական հայերենի ***ա, ու, օ*** ձայնավորների քմային տարբերակներն են և նույնպես ունեն գործածության լայն շրջանակներ. հանդիպում են տարբեր դիրքերում, բնիկ և փոխառյալ բառերում: Հնչույթաբանական մակարդակում այս հնչյունները իմաստային հակադրության զույգեր են կազմում ինչպես մյուս ձայնավորների, այնպես էլ՝ միմյանց հետ, ինչպես՝ ***կ²ł*** (գալ) – ***կáւł*** (գայլ), ***դ³ղդ*** (վիշտ) - ***դáւղդ*** (մրուր), ***շ³շ*** (1. անխելք, 2. շեղ, շիլ) – ***շûշ*** (ընձյուղ), ***հáւł*** (***հáւł անել-*** թույլ տալ) – ***հûł*** (ուլ), ***գáւł*** (վարդ) - ***գûł*** (լճակ):

Սակայն ***³***, ***áւ***, ***û***-Ç հնչույթայնությունը ի վերջո հաստատվում է ամենամերձավոր հնչույթների՝ ***ա, օ, ու***-ի հետ ունեցած հակադրություններով՝ ***ł³վ*** (լավ) – ***łավ*** (տեղատարափ անձրև), ***պ³տ*** (թոնրի պատ) -***պատ*** (պատ), ***վ³ր*** (1. հետք, 2. շարք) – ***վար*** (վար), ***տ³փ*** (1. հաց՝ լավաշ թխելու հարմարանք, 2. փոքրիկ հյուղակ, 3. օրորոցում երեխայի տակ դրվող բարձիկ) – ***տափ*** (գետին, հանդամաս), ***կáւմ*** (գոմ) – ***կում*** (ումպ), ***տáւշ*** (պարեղանակ) – ***տուշ*** (թանաք), ***շûր*** (հագուստ, շոր) – ***շօր*** (շոռ, լոռ), ***ծûր*** (ձոր) – ***ծօր*** (ծորալը), ***տûղ*** (դող) – ***տօղ*** (ուղիղ շարք՝ տող), ***ûր³մ*** (փչացած) – ***օրան*** (կանխագգացում):

Չնայած ***³-ա, áւ-ու, û-օ*** հակադրություն առկա է հիմնականում շեշտակիր փակ վանկում (միավանկ բառերում), այնուամենայնիվ, դատելով բերված նվազագույն զույգերից, քմային այդ ձայնավորները կարելի է համարել անկախ հնչույթներ:

Հարկ է նշել նաև, որ բարբառի որոշ խոսվածքներում հատուկենտ բառերի մեջ գործածական է ***ը*** և ***է*** հնչյունների միջին աստիճանը ներկայացնող ***ը՝*** երկբարբառակերպը՝ ***մը՝ս, վը՝տ, ծրմը՝ռնը, տը՝սնալ,*** որը, սակայն, չհակադրվելով ամենամերձավոր՝ ***ը*** և ***է*** ձայնավորներին, հանդես է գալիս որպես վերջիններիս արտասանական տարբերակ:

Բաղաձայն հնչյունները ներկայանում են հետևյալ շարքերով. ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ՝ ***բ, գ, գ՛, դ, ձ, ջ,*** խուլ պայթականներ և կիսաշփականներ՝ ***պ, կ, կ՛, տ, ծ, ճ,*** շնչեղ խուլ պայթականներ և կիսաշփականներ՝ ***փ, ք, ք՛, թ, ց, չ,*** ձայնեղ շփականներ՝ ***վ, զ, ժ, ղ,*** խուլ շփականներ՝ ***ս, շ, խ, հ,*** ձայնորդներ՝ ***մ, ն, ր, ռ, լ, յ***:

Հայ բարբառների հնչյունական միահատկանիշ դասակարգմամբ Գորիսի բարբառը պետք է դասել առաջին տեղաշարժի ենթարկված (երկաստիճան ձայնեղագուրկ) բարբառների շարքին: Սակայն, ընդհանուր առմամբ, ձայնեղները խորթ չեն բարբառի խոսվածքներին և հանդիպում են.

ա) գրաբարից ավանդված և բարբառային մի շարք բառերի բառասկզբի դիրքում՝ ***բրոի, բրխկալ, բուղուքավէր, գ՛իղ³լ, գ՛ա́ւլբ³, գրդրլ, դադ, դիլ³րէլ, դրոի,***

բ) ***մ*** և ***ն*** ձայնորդներից հետո՝ ***ամբար/անբար, շամբ, սէկտէնբէր, բ³նգի, թանգ, ժ³ռ³նգ, թանձրր, խրնձմ՛ր, պրրինձ, պէնջ³ր, խօնջան***,

գ) բնաձայնական բառերում՝ ***բրոբրոդալ, բրլբրլալ, գրոգրռալ, դրռդրռալ, դրրրնգդրրրնգալ, կրնձկօնձալ,***

դ) փոխառյալ բառերում՝ ***բայդուշ, աբուռ, բա́ւլա́ւդ, գ՛³դ³, գէջդանգէջ, գալուստիկ, դաշնիկ, դ³վթ³ր, ջ³դա́ւ, աջրդ, ջօլուբ***:

***Ձ*** բաղաձայնի համար բացառված է բառասկզբի դիրքը:

Պայթականները և կիսաշփականները հնչույթաբանական մակարդակում հակադրվում են ***ձայնեղություն -ոչ ձայնեղություն*** և ***շնչեղություն -ոչ շնչեղություն*** հատկանիշներով: Առաջին հատկանիշով ձայնեղները հակադրվում են պարզ և շնչեղ խուլերին՝ ***բրլբրլալ*** (բլբլալ) - ***պրլպրլալ*** (փայլփլել), ***բար*** (պտուղ) - ***փար*** (ճախարակի թելերը միացնող առասան), ***գազ*** (գազ) – ***կազ*** (մետաքսաթել), ***գրոգրռալ*** (գոգռալ) – ***քրոքրռալ*** (բարձրաձայն ծիծաղել), ***դաղ*** (խարան) – ***տաղ*** (տաղերգ), ***դալ*** (անասունի առաջին կաթը) – ***թալ*** (վայրի բանջարի տեսակ), ***ջան*** (հոգի) – ***չան*** (հեղուկ պահելու մետաղյա մեծ տարա, ավազան), ***հունձ*** (հունձ) – ***հունց*** (***հունց տալ*** - հունցել):

Երկրորդ հատկանիշով շնչեղ խուլերը հակադրվում են խուլերին՝ ***փօղ*** (դրամ) – ***պօղ*** (շիկացած ածուխ), ***փառ*** (բարակ թաղանթ) – ***պառ*** (բառ), ***քարէլ*** (քարով սալահատակել) – ***կարէլ*** (կարել), ***քիրէլ*** (քերել) – ***կիրէլ*** (գրել), ***թանգ*** (թանկ) – ***տանգ*** (տոպրակի կանթ, ունկ), ***թակ*** (որևէ բան ծեծելու փայտե գործիք) – ***տակ*** (ծալք), ***ցաք*** (փշոտ թուփ) – ***ծաք*** (ձագ), ***ցրրտէլ*** (ցուրտն ընկնել) – ***ծրրտէլ*** (ծրտել), ***չար*** (չարաճճի) - ***ճար*** (դեղ, հնար, միջոց), ***չախ*** (ժամանակ) - ***ճախ*** (ցախ):

Ինչպես երևում է նշված հակադրական զույգերից, բարբառում գրական հայերենին համապատասխանող բոլոր պայթականները և կիսաշփականները անկախ հնչույթներ են:

***Գ՛, կ՛, ք՛*** բաղաձայնները, որոնք ***գ, կ, ք*** հնչյունների քմային ձևերն են, գործածվում են բնիկ և փոխառյալ բառերում՝ բառասկզբում և բառամիջում: Հնչույթաբանական մակարդակում դրանք կարող են վերոհիշյալ հատկանիշներով հակադրվել մյուս պայթականներին և կիսաշփականներին, ինչպես նաև՝ իրար՝ ***գ՛ա́ւլ*** (վարդ) – ***կ՛ա́ւլ*** (գայլ) – ***ք՛ա́ւլ*** (մոխիր), ***ք՛³լ*** (արու գոմեշ) – ***կ՛³լ*** (գալ): Այս հնչյունների հնչույթային արժեքը առավել հաստատվում է ամենամերձավոր՝ ***գ, կ, ք*** հնչույթների հետ կազմած նվազագույն զույգերով, ինչպես՝ ***գ՛ազ (գ՛ազ անց կրցրնէլ*** – կովի ստերջ մնալը) - ***գազ*** (գազ), ***գ՛ո՛ւլ*** (լճակ) - ***գօլ*** (խփված գնդակը), ***կ՛ո՛ւրծ*** (գործվածք, հյուսվածք) - ***կօրծ*** (1.գործ, 2.անասունի կուրծք), ***կ՛ո՛ւրծէլ*** (գործել, հյուսել) – ***կօրծել*** (կրծել), ***կ՛էնալ*** (հագնել) – ***կէնալ*** (մնալ), ***ք՛իցէլ*** (գցել) – ***քիցէլ*** (1.սփռել, 2. շփել), ***ք՛³ր*** (օգուտ) – ***քար*** (քար), ***ք՛³լ³*** (գանգ, գլուխ) – ***ք³լ³*** (ցուլ):

Ճիշական բաղաձայնները բարբառում նույնպես ունեն լայն գործածություն. դրանք հանդիպում են բառի տարբեր դիրքերում, բնիկ և փոխառյալ բառերում՝ հնչույթաբանական մակարդակում հակադրվելով երկու հատկանիշով և ներկայանալով որպես անկախ հնչույթներ:

***Ձայնեղություն – խլություն*** հատկանիշով հակադրվում են ***ս*** և ***զ, շ*** և ***ժ, ղ*** և ***խ*** բաղաձայնները՝ ***սօկ*** (հյութ) - ***զօկ*** (ազուլիսցիների մականունը), ***խասալ ա*** (խոսել է) – ***խազալ ա*** (խուզել է), ***խառս*** (1.անխառն, մաքուր, 2. բամբակե նուրբ գործվածք) – ***խառզ*** (գիծ), ***շամ*** (մոմ) – ***ժամ*** (եկեղեցի), ***վշշօց*** (վշշօց) – ***վրժժօց*** (վժժոց), ***օշ*** (ուշք) –***օժ*** (ուժ), ***ղօրթ*** (ճիշտ) – ***խօրթ*** (խորթ), ***խաղխալ*** (խոշոր անցքերով մաղ) – ***խաղալ*** (խաղալ), ***կաղ*** (կաղ) – ***կախ*** (կախված):

***Սուլականություն – շչականություն*** հատկանիշով հակադրության նվազագույն զույգեր են կազմում ***ս*** և ***շ, զ*** և ***ժ*** շփականները՝ ***սար*** (սար) – ***շար*** (շարք), ***հասստ*** (հաստ) - ***հաշտ*** (հաշտ), ***փոս*** (փոս) - ***փոշ*** (փուշ), ***զ³նգ*** (զանգ) – ***ժ³նգ*** (ժանգ), ***վրզվրզալ*** (վզվզալ) – ***վրժվրժալ*** (վժվժալ), ***վրզզ*** (վզզալու ձայնը) - ***վրժժ*** (վժժալու ձայնը):

Կոկորդային շփական *հ*-ն շփականների համակարգում առանձնանում է որպես միայնակ բաղաձայն: Նրա հնչույթայնությունը որոշվում է մյուս շփականների հետ հակադրության գույգեր կազմելու հնարավորությամբ՝ ***հարէլ*** (հարել) – ***վարէլ*** (վարել), ***հրա*** (կենդանիներին գրգռելու ձայն) – ***զրա*** (շատ մեծ, հսկա), ***հո՞ր*** (1. ու՞ր, 2. ինչու՞) – ***խօր*** (խոր) – ***սօր*** (սուր) – ***շօր*** (շոռ, լոռ), ***համ*** (համ) – ***ժամ*** (եկեղեցի), ***հազ*** (հազ) – ***դազ*** (սազ), ***մահ*** (մահ) – ***մաղ*** (մաղ), ***մրհակ*** (մահակ) – ***մրդակ*** (դուռ):

Մյուս կողմից՝ *հ*-ն կարող է հակադրվել զրո հնչույթին՝ ***հայ*** (հայ) - ***այ*** (ուրախության, զարմանքի բացականչություն), ***հալ*** (վիճակ) - ***ալ*** (1. այլևս, 2. ևս, նույնպես), ***հո՞ր*** (1. ու՞ր, 2. ինչու՞) – ***օր*** (օր):

Շրթնատամնային *վ* շփականի հնչույթային արժեքը ժամանակակից հայերենում որոշվում է *ֆ* շրթնատամնայինի հետ կազմած հակադրության գույգերով: Գորիսի բարբառում *ֆ* շփականի բացակայության պատճառով *վ*-ն նույնպես առանձնանում է որպես միայնակ բաղաձայն: Սակայն այն հակադրության մեջ է մտնում մի կողմից մյուս շփականների, մյուս կողմից՝ *ֆ*-ին փոխարինող *փ* շնչեղ խուլի հետ՝ վերջինիս հակադրվելով ***ձայնեղություն-խլություն*** հատկանիշով, ինչն էլ հիմք է տալիս ասելու, որ *վ*-ն ևս անկախ հնչույթ է՝ ***վազ*** (վազելը) – ***դազ*** (սազ)-***սազ*** (1.երաժշտական գործիք, 2.հարմար) – ***խազ*** (գիծ) – ***հազ*** (հազ), ***վար*** (վար) – ***շար*** (շարք), ***վօռ*** (հետույք) - ***զօռ*** (զորություն), ***կով*** (կով) – ***կոժ*** (կուժ),***վըշշօց*** (վշշալու ձայն) - ***փըշշօց*** (փշշալու ձայն), ***վօղ*** (հող) - ***փօղ*** (դրամ), ***վէշ*** (ուղեբեռ) - ***փէշ*** (քղանցք):

Ձայնորդները, բացառությամբ *ը* -ի, գործառում են բառի բոլոր դիրքերում:

*Ը* -ի համար բացառված է բառասկզբի դիրքը, թերևս կարելի է նշել ***ըզէ*** բառը: *Ը*-ն բառասկզբում նույնպես հանդիպում է ոչ հաճախակի՝ հիմնականում փոխառյալ բառերում՝ ***ռաղյօ, ռիզին, ռիսկ, ռահմ, ռրհաթ, ռուշվաթ*** և այլն:

Այնուամենայնիվ, *ը*-ն և *ռ*-ն անկախ հնչույթներ են. դրանք կարող են հակադրվել իրար բառամիջում և բառավերջում, ինչպես՝ ***սարէլ*** (լարել) – ***սառէլ*** (սառչել), ***վառէլ*** (այրել) – ***վարէլ*** (վարել), ***տար*** (տեր) – ***տառ*** (տառ), ***սէր*** (սեր) – ***սէռ*** (սայր):

*Յ*-ի հնչույթայնությունը որոշվում է *հ*-ի հետ կազմած հակադրության գույգերով՝ ***յըղէ*** (հղի) – ***հըղէ*** (ճանապարհ), ***յէտ*** (ետ) – ***հէտ*** (անգամ), ***յալ*** (բաշ) – ***հալ*** (վիճակ):

*Մ* և *Ն* ռնգային ձայնորդները հնչույթաբանական մակարդակում հակադրվում են իրար՝ կազմելով հակադրության նվազագույն գույգեր՝ ***մօր*** (մուր) – ***նօր*** (նոր), ***խամ*** (1.անփորձ, 2.անմշակ) – ***խան*** (իշխան, մեծավոր), ***դամ*** (շունչ) - ***դան*** (հացահատիկ), իսկ *լ*-ի հնչույթային արժեքը հաստատվում է *ղ* շփականի հետ ունեցած հակադրությամբ՝ ***լավ*** (տեղատարափ անձրև) – ***դավ*** (աբեթ), ***քօլ*** (1. թուփ, 2.անտառ) – ***քօղ*** (քուղ), ***հալալ*** (1. անաղարտ, 2.հարազատ) – ***հաղալ*** (խաղալ):

Այսպիսով, ամփոփելով շարադրվածը, կարելի է ասել, որ Գորիսի բարբառում գործածվող ***ա, ³, ու, á ւ, օ, û, է, ի, ը*** ձայնավորները և ***բ, պ, փ, գ, կ, ք, գ՛, կ՛, ք՛, դ, տ, թ, ճ, ծ, ց, ջ, ճ, չ, զ, ս, ժ, շ, ղ, խ, հ, վ, յ, ր, ռ, մ, ն, լ*** բաղաձայներն անկախ հնչույթներ են:

*Ծանոթագրություններ*

1. *Տե՛ս* Ալ.Մարգարյան, *Գորիսի բարբառը*, Եր., 1975, էջ 3:
2. *Տե՛ս* նույն տեղը:
3. *Տե՛ս* Գ.Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Եր., 1972, էջ 136:
4. *Տե՛ս* Ալ.Մարգարյան, *նշվ.աշխ.*, էջ 7:
5. *Տե՛ս* Адонц Н., *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1925 ст. 187.
6. *Տե՛ս* Ալ.Մարգարյան, *նշվ.աշխ.*, էջ 23:
7. *Տե՛ս* Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., *Ժամանակակից հայոց լեզու*, հ.1, Եր., 1979, էջ 54:

*Резюме*

В статье рассматривается фонологическая система Горисского диалекта. На основе дистинктивных минимальных пар автор доказывает, что в данном диалекте автономным фонологическим значением обладают не только соответствующие фонемы литературного армянского языка, но и палатализованные гласные и согласные.